

## **ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

### **1. ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

1.1. Օրենքների նախագծերի ընդունումը նախ պայմանավորված է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի և սնանկության վարույթի հարաբերակցության կանոնակարգման անհրաժեշտությամբ:

1.2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացն ուղղված է գույքի դեմ, որի ձեռքբերումն էական ծավալներով չի հիմնավորվում օրինական եկամտի աղբյուրներով: Այս ինստիտուտը կարող է դառնալ ֆինանսական հանցագործությունների կանխարգելման և հանցավոր եկամուտների շրջանառության դեմ պայքարի կարևոր գործիք: Միևնույն ժամանակ, որոշ դեպքերում պարտապանի սնանկությունը կարող է առաջացնել խնդիրներ, որոնք դեռևս կարգավորված չեն գործող օրենսդրությամբ:

1.3. Այսպիսով, սույն նախագիծը նպատակ է հետապնդում կանոնակարգելու նշված երկու վարույթների հատման հետևանքները:

1.4. Ի հավելումն նշվածի՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա ստեղծված պատասխանատու ստորաբաժանման կողմից վեր են հանվել և ներկայացվել իրենց գործունեությանն առնչվող որոշ օրենսդրական խնդիրներ, որոնց առնչությամբ լուծումներ են ներառվել սույն նախագծում:

1.5. Նախագծով նախատեսվում է նաև կատարել համապատասխանեցման և տեխնիկական բնույթի փոփոխություններ հարակից օրենքներում:

## 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ

### ***I. Գործերի ենթակայությունը***

1.6. Հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերը և սնանկության գործերը քննելու համար անհրաժեշտ հատուկ մասնագիտական գիտելիքները, ինչպես նաև վարույթներից յուրաքանչյուրի էական ծավալը՝ նպատակահարմար է դրանց քննությունը տարբեր դատարանների կողմից:

1.7. Այդպես օրինակ, Ամերիկայի միացյալ Նահանգներում քաղաքացիական բռնագանձման գործերի քննությունը հանձնված է տարածքային դատարանների (district courts) ենթակայությանը և այդպիսի ենթակայությունից արված չէ բացառություն, այդ թվում նաև՝ սնանկության դատարանի օգտին:<sup>1</sup> Ավելին, սնանկության վարույթ սկսելը չի հանգեցնում քաղաքացիական բռնագանձման գործի կասեցմանը, որը, գործը այլ դատարան փոխանցելու մեխանիզմների բացակայության պայմաններում, շարունակում է քննվել այն դատարանում, որտեղ հարուցվել էր:<sup>2</sup>

1.8. Ելնելով նշվածից, նախագծով առաջարկվում է անել բացառություն քաղաքացիական գործերը սնանկության գործի հետ քննելու կանոնից և թողնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի քննությունը մասնագիտացված դատավորներին:

### ***II. Բռնագանձման քաղաքացիական գործի հարուցումը և քննությունը***

1.9. «Սնանկության մասին» օրենքի կարգավորումների ուժով սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին կամ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո առաջանում է պարտապանի գույքին վերաբերող այլ քաղաքացիական գործեր հարուցելու և քննելու արգելք: Հարուցված գործերը կարճվում են կամ ավարտվում են, իսկ համապատասխան պահանջները կարող են ներկայացվել սնանկության գործի շրջանակներում:

---

<sup>1</sup> When Two Worlds Collide the Relationship and Conflicts Between Asset Forfeiture and Bankruptcy Law, May 2002, American Bankruptcy Institute Journal, online at: < <https://www.abi.org/abi-journal/when-two-worlds-collide-the-relationship-and-conflicts-between-asset-forfeiture-and> >.

<sup>2</sup> Ibid.

1.10. Նմանօրինակ կարգավորում նախատեսված է նաև Ամերիկայի միացյալ նահանգների սնանկության օրենսդրությամբ: Միևնույն ժամանակ, նախադեպային իրավունքը հաստատել է, որ գործերի քննությունը շարունակելու արգելքից բացառություն են կազմում պետության կողմից ներկայացված բռնագանձման պահանջներով գործերը, որոնք համարվում են հանրային շահ հետապնդող և շարունակվում են քննվել անկախ սնանկության գործի հարուցումից:<sup>3</sup>

1.11. Ավստրալիայի սնանկության օրենսդրությունը արգելում է սնանկության դատարանի կողմից հանցավոր ակտիվների բռնագանձման գործերի քննության կասեցումը:<sup>4</sup>

1.12. Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև ենթակայության բաժանումը, որն առաջարկվում է անել այս նախագծով՝ առաջարկվում է նաև հանել քաղաքացիական գործերի քննության սահմանափակումը, այնքանով, որքանով դա վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերով գործերին:

### ***III . Անձին սնանկ ճանաչելուց հետո բռնագանձման գործով կայացված դատական ակտերի կատարումը***

1.13. Վերոգրյալն ամփոփելով՝ նախագիծն առաջարկում է չսահմանափակել սնանկության գործի քննությանը զուգահեռ բռնագանձման գործի քննությունը: Այդպիսով, առաջանում է անհրաժեշտություն կարգավորելու այն դատական ակտերի կատարումը, որոնք կայացվում են անձին սնանկ ճանաչելուց հետո:

1.14. Իռլանդիայի օրենսդրությունն արգելում է անձին սնանկ ճանաչելուց հետո պարտապանին պատկանող գույքի վերաբերյալ կայացնել արգելադրման կամ բռնագանձման դատական ակտ:<sup>5</sup>

1.15. Քաղաքացիական բռնագանձման առնչությամբ համարժեք արգելք առկա է նաև Մեծ Բրիտանիայի օրենսդրությամբ,<sup>6</sup> իսկ որոշ հեղինակներ նույնիսկ պնդում են, որ պետության կողմից բարեխիղճ պարտատերերից առաջ բավարարում ստանալը

---

<sup>3</sup> Henry C. Kevane, What Just Happened? How Asset Forfeiture Affects Bankruptcy Distributions, “Asset Forfeiture”, 30 June 2012, online at <

[https://www.americanbar.org/groups/business\\_law/publications/blt/2012/06/03\\_kevane/](https://www.americanbar.org/groups/business_law/publications/blt/2012/06/03_kevane/)>.

<sup>4</sup> Bankruptcy Act 1966, Section 189AA (2).

<sup>5</sup> Proceeds of Crime Act 1996, Section 11 (2).

<sup>6</sup> Proceeds of Crime Act 2002, Section 311.

կարող է դիտարկվել որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտում:<sup>7</sup>

1.16. Մյուս կողմից, Ավստրալիայի սնանկության օրենսդրությունը նախատեսում է, որ եթե առկա է անձին սնանկ ճանաչելու օրը կամ դրանից հետո հանցավոր ակտիվների վերականգման օրենսդրության կիրառմամբ կայացված դատական ակտ, ապա այդ մասով արգելվում է գույքի բաշխումը պարտատերերի միջև:<sup>8</sup> Ավելին բաշխումն արգելվում է նաև, եթե գույքի բռնագանձման հարցը դեռ քննվում է այլ դատարանում:<sup>9</sup> Դատարանը կարող է նաև արգելել կառավարչին սնանկության գործի քննության ավարտից հետո մնացած գույքը վերադարձնել պարտապանին, եթե համոզվում է, որ հանցավոր (ապօրինի) գույքի բռնագանձման հարցը քննվում է զուգահեռ քրեական կամ քաղաքացիական գործով:<sup>10</sup>

1.17. Ամերիկայի միացյալ նահանգներում, ինչպես արդեն նշվել է, գույքը, որի առնչությամբ պետության կողմից ներկայացվում է բռնագանձման պահանջ դուրս է գալիս պարտապանին պատկանող գույքի ծավալից, քանի որ համարվում է պետության սեփականությունը դրա ձեռքբերման պահից: Նշվածը որոշ հեղինակներ համարում են խնդրահարույց՝ հիմք ընդունելով, որ պետության բռնագանձման պահանջն ամեն դեպքում ենթակա է հաստատման դատարանի կողմից և առկա օրենսդրական կանոնն այն է, որ պետության բռնագանձման պահանջը բավարարվի չապահովված պարտատերերից հետո:<sup>11</sup>

1.18. Հաշվի առնելով վերոնշյալը՝ նախագծով առաջարկվում է անձին սնանկ ճանաչելուց հետո կայացված բռնագանձման մասին դատական ակտերը կատարել պարտատերերի պահանջների բավարարումից հետո: Միաժամանակ, առաջարկվում է հնարավորություն ստեղծել իրավասու մարմնի համար ներկայացնելու առարկություններ և վիճարկելու պարտատերերի այն պահանջները, որոնց բարեխիղճ լինելու վերաբերյալ առկա են կասկածներ: Վիճարկվող պահանջները «Սնանկության մասին» օրենքով նախատեսված կարգով կկասեցվեն մինչև դրանց վերաբերյալ որոշման կայացումը:

<sup>7</sup> Ian Dawson, The trustee in bankruptcy of a criminal facing a confiscation order, *Insolv. Int.* 2005, 18(8), 121-126, 123.

<sup>8</sup> Bankruptcy Act 1966, Section 114A.

<sup>9</sup> *Ibid*, Section 114B.

<sup>10</sup> *Ibid*, Section 231A.

<sup>11</sup> *St'u Myron M. Sheinfeld, Teresa L. Maines & Mark W. Wege, Civil Forfeiture and Bankruptcy: The Conflicting Interests of the Debtor, Its Creditors and the Government*, 69 *Am. Bankr. L.J.* 87 (1995).

#### **IV. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթին առնչվող հարցեր**

1.19. ՀՀ դատախազության կողմից արձանագրված որոշ հարցերի լուծման նպատակով նախագծով առաջարկվում է նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում ներառել 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 3-րդ հոդվածով օրենսգրքում լրացված 223.1-223.4-րդ հոդվածները, ինչպես նաև օրենքի որոշ կարգավորումներ համապատասխանեցնել 2020 թվականի հունիսի 6-ին ընդունված՝ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի դրույթներին: Առաջարկվում են նաև որոշ փոփոխություններ, որոնք ուղղված են օրենքում ամրագրված հասկացությունների մեկնաբանման առնչությամբ տարրնկալումների բացառմանը և տեխնիկական վրիպակների վերացմանը:

### **3. ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ և ԱՆՁԻՆՔ**

1.20. Նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

### **4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

1.21. Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կարգավորել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերի և սնանկության գործերի հարաբերակցությունը: Նշվածը կվերացնի հնարավոր օրենսդրական բացերի արդյունքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի արդյունավետության նվազման հնարավորությունը՝ միաժամանակ ապահովելով պարտատերերի շահերի պաշտպանությունը: